

Պարզաբանումներ կազմակերպությունների համար

Վերջին թարմեցում՝ հուլիսի 15, 2019 թվական

Հարգելի՛ հաճախորդներ.

Տեղեկացնում ենք, որ «Կենգուրու ԴՊ» ՍՊԸ-ն հանդիսանում է առջանց հարթակ, որի միջոցով հաճախորդը հարթակի հետ համագործակցող պրոֆեսիոնալ առաքիչներից ստանում է որակյալ առաքման ծառայություններ: Միաժամանակ հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք նաև, որ «Կենգուրու ԴՊ» ՍՊԸ-ի կողմից չի կարող դուրս գրվել ծառայությունների մատուցման էլեկտրոնային հաշվակային փաստաթուղթ, սակայն, մեր հաճախորդներին, ովքեր ՀՀ օրենսդրության պահանջներից ելնելով ունեն խնդիր ստացված ծառայությունները ՀՀ հարկային օրենսգրքին համապատասխան փաստաթղթավորելու և ծախսագրելու, տեղեկության կարգով հայտնում ենք.

Ըստ ՀՀ Հարկային օրենսգրքի 111-րդ Հոդվածի, Ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազան որոշելիս Օրենսգրքով սահմանված համախառն եկամտից նվազեցվում են շահութահարկ վճարողի կատարած՝ այլ ծախսերի հետ մեկտեղ նաև Օրենսգրքի 55-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը: Օրենսգրքի 55-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն էլեկտրոնային առևտրի շրջանակներում կատարվող՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով (այն է ստացված եկամտի և կատարված ծախսի ձանաչումը և կամ հիմնավորումը) սահմանված գործարքները կարող են փաստաթղթավորվել վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերով կամ այդ կազմակերպությունների կողմից կիրառվող՝ վճարային գործիքներ սպասարկող սարքավորումների միջոցով տպագրվող փաստաթղթերով:

Այն կազմակերպությունները և ֆիզիկական անձիք, ովքեր «Կենգուրու ԴՊ» ՍՊԸ-ին պատկանող հարթակի միջոցով կստանան ծառայություններ, կարող են մեր հարթակին կցված՝ իրենց պատկանող, վճարային քարտից հանված քաղվածքը որպես հիմք ընդունել և հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվետու տարվա շահույթը որոշելու համար կատարել համապատասխան չափով նվազեցումներ: